ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐԵՄԻԵՐ ԼԻԳԱՅԻ 2025-26 ՄՐՑԱՇՐՋԱՆԻ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻՉ» ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2025-26 մրցաշրջանի «Լավագույն Մարզիչ» անվանակարգում քվեարկությանը կարող են մասնակցել՝

ՁԼՄ-ների ներկայացուցիչները և Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2025-2026 մրցաշրջանի մասնակից ակումբները։

2. Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2025-26 մրցաշրջանի «Լավագույն Մարզիչ» անվանակարգում ցուցակի մեջ ընդգրկվում են՝

Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2025-26 մրցաշրջանում իրենց ակումբներում հաջողություն գրանցած մարզիչները։

3. Քվեարկողներին առաջարկվում է վերը նշված սկզբունքով կազմված մարզիչների ցուցակը, որոնցից պետք է ընտրել 1-ին, 2-րդ ու 3-րդ հորիզոնականները: 1-ին հորիզոնականում նշված մարզիչը կստանա 5 միավոր, 2-րդում նշված մարզիչը՝ 3, իսկ 3-րդ հորիզոնականինը՝ 1 միավոր:

Ակումբների ներկայացուցիչները չեն կարող քվեարկել մրցաշրջանի ընթացքում/ տվյալ պահին իրենց ակումբը ներկայացրած/ներկայացնող թեկնածուի օգտին։
Քվեարկությունը պետք է ուղարկել thebest@ffa.am էլհասցեին՝ նշելով քվեարկության տարբերակները (1-ին, 2-րդ և 3-րդ հորիզոնականները)։
ՁԼՄ-ները պետք է նշեն լրատվամիջոցի անվանումը, քվեարկող լրագրողի անուն-ազգանունը և կցել լրագրողական բեյջը։

4. Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2025-26 մրցաշրջանի «Լավագույն Մարզիչ» մրցանակին կարժանանա ամենաշատ ձայն ստացած մասնագետը: